

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԷԿՈՆՈՄԻԿՍ-ԱՈՒԴԻՏ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



REPUBLIC OF ARMENIA
«ECONOMICS-AUDIT»
LIMITED LIABILITY
COMPANY

Աուդիտորական ծառայությունների իրականացման **Լիցենզիա ԱԾ N 085**
Տրված՝ 15.12.2010թ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից
378240, ՀՎՀՀ 01572702, h/h 15100-11308230100
ք. Երևան, Խանջյան 47/8

Անկախ աուդիտորի Եզրակացություն

«ԱՌԳԵ ԲԻԶՆԵՍ» ՄՊԸ մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել « ԱՌԳԵ ԲԻԶՆԵՍ » ՄՊԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռքբերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհարժեշտ ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, սակայն ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Չձևավորված կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

2017թ. Ապրիլ 11

Տնօրեն
Արմինե Գրիգորյան



Աուդիտոր
Վաչե Հովսեփյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազ. Դրամ	Ծա- նոթ.	2015թ.	2016թ.
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	548,142	538,839
Կենսաբանական ակտիվներ			
Ներդրումային գույք			
Ոչ նյութական ակտիվներ	5	17,444	10,771
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ			
Հետաձգված հարկային ակտիվներ		28,917	17,825
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ			
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		594,503	567,435
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	6	1,634,507	807,732
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	1,196,690	1,050,511
Ընթացիկ հարկային ակտիվներ շահութահարկի գծով			
Ընթացիկ ֆինանսական ակտիվներ		49,867	325,711
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	218,615	1,337,961
Այլ ընթացիկ ակտիվներ		10,137	15,321
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		3,109,366	3,537,236
Ընդամենը ակտիվներ		3,703,869	4,104,671

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 01/03/2017թ.

Տնօրեն

Մ. Ամիզյան



Գլխ. հաշվապահ

Ա. Ղազարյան



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ
(շարունակություն)

Հազ. Դրամ

	Ծա- նոթ.	2015թ.	2016թ.
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
Բաժնետիրական կապիտալ		240,729	240,729
Վերագնահատումից պահուստ		-	-
Կուտակված շահույթ/(վնաս)		1,976,584	346,455
Պահուստային կապիտալ		-	-
Սեփական կապիտալի այլ տարեր		-	-
Ընդամենը սեփական կապիտալ		2,217,313	587,184
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ		-	-
Հետաձգված հարկային պարտավորություն		-	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություն		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ		-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	1,384,507	3,349,466
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		51,353	78,897
Պահուստներ այլ պարտավորությունների և ծախսումների գծով		50,696	89,124
Ընթացիկ պարտավորություններ մասնակիցներին		-	-
Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ		-	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		1,486,556	3,517,487
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		3,703,869	4,104,671

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 01/03/2017թ

Տնօրեն



Մ. Ամիզյան

Գլխ. հաշվապահ

Ա. Ղազարյան



ՀԱՄԱՊԱՐԹԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազ. Դրամ	Ծանոթ.	2015թ.	2016թ.
Հատույթ	10	9,377,394	8,078,689
Վաճառքի ինքնարժեք	11	(7,829,756)	(6,346,407)
Համախառն շահույթ/(վնաս)		1,547,638	1,732,282
Այլ եկամուտներ	12	741,067	978,671
Իրացման ծախսեր		(317,537)	(662,863)
Վարչական ծախսեր	13	(1,058,683)	(1,113,228)
Այլ ծախսեր		(333,139)	(412,617)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		579,346	522,245
Ֆինանսական ծախսեր	14	(5,404)	(19)
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		573,942	522,226
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	15	(168,795)	(175,771)
Տարվա շահույթ (վնաս)		405,147	346,455
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդամենը համապարփակ արդյունք		405,147	346,455

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝ 01/03/2017թ

Տնօրեն

Ս. Ամիգյան

Գլխ. հաշվապահ

Ա. Ղազարյան



Ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը: